ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
WRITERS UNION OF ARMENIA
SHIRAK'S DEPARTMENT
СОЮЗ ПИСАТЕЛЕЙ АРМЕНИИ
ШИРАКСКОЕ ОТДЕЛЕНИЕ
377500, ՀՀ Ք. ԳՅՈՒՄՐԻ, Գ. Նժդեհ 16
ՀԵՌ. +374 94 001125, +374 99 001125
16 G. Nzdeh STR. GYUMRI, RA 377500
TEL.: +374 94 001125, +374 99 001125
377500, РА Г. ГЮМРИ, G. Нжде 16
ТЕЛ. +374 94 001125, +374 99 001125

Գյումրու քաղաքապետին
փոխարինող պարոն Ավետիս Առաքելյանին

Հարգելի պարոն Առաքելյան

Սկսած 2000 թվականից ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքին Գյումրու քաղաքապետարանի կողմից տրամադրված դրամական միջոցների շնորհիվ կարողացել ենք աշխույժ պահել մեր քաղաքի գրական կյանքը. կազմակերպվել են բազմաթիվ գրական միջոցառումներ, մեծարման երեկոներ, տարելիցներ, գրքերի շնորհանդեսներ, ուխտագնացություններ, մրցանակաբաշխություններ…

Այս տարի ևս Գյումրի քաղաքի գրական կազմակերպության ծրագրերը (գրահրատարակչական աշխատանքների կազմակերպում, գրական միջոցառումների անցկացում) իրականացնելու նպատակով դիմում ենք Ձեզ, ակնկալելով, որ Դուք դարձյալ նեցուկ կլինեք գրողական կյանքի շարունակականությունը ապահովելու և զարգացնելու Ձեր իսկ սկսած գործընթացին:

2026թ. լրանում են Մկրտիչ Արմենի ծննդյան 120, Շմավոն Թորոսյանի ծննդյան 100, Քաջիկ Գրիգորյանի ծննդյան 100, Շիրակ Մանուկյանի ծննդյան 85, Սամվել Մարգարյանի ծննդյան 75, Սարո Գյոդակյանի ծննդյան 75, Ժորա Կարապետյանի ծննդյան 75, Գագիկ Սարոյանի ծննդյան 65, Ռոզա Հովհաննիսյանի ծննդյան 65, Թինա Վարդանյանի ծննդյան 60 ամյակները, որոնք հարկ է նշել հավուր պատշաճի:

Տերյանական օրերին գրական պատվիրակությունը դարձյալ ցանկանում է այցելել Նաիրի երկրի բանաստեղծի ծննդավայր Ջավախք և հարգանքի տուրք մատուցել մեծանուն բանաստեղծին:

Ծրագրում ունենք նաև Արարատ Մկրտումյանի անվան և Կարապետ Հովսեփյանի անվան ամենամյա գրական մրցանակաբաշխություններ:

Նվազագույն ծախսերը, որ անհրաժեշտ են այս ամենի կազմակերպման համար կազմում են 850 000 դրամ (ներառված նաև տնտեսական ծախսերը):

Կանխավ երախտագիտությամբ՝

ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի
նախագահ՝ Անդրանիկ Կարապետյան

16.02.2026թ.

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆ» ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԲԱԺԻՆ
ՍՏԱՑՎԱԾ է 16.02.2026թ.
ԳՐԱՆՑՎԱԾ է N 1990